Արձանագրություն N 2-1
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/6 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

05.05.2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Մելիքյան
Անդամներ՝ Կ. Բրուտյան
Հ. Պապյան
Էդ. Առուստամյան
Ա. Աչոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման օրվա և ժամի, ինչպես նաև՝ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Լ. Մելիքյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 2026 թվականի մայիսի 5-ին ժամը 11:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնման գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիում	1 289 576 450	874 165 000	174 833 000	1 048 998 000
2	«Բաղրամյանշին» ԲԲԸ		937 500 000	187 500 000	1 125 000 000
3	«ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում		992 432 127	198 486 425	1 190 918 552
4	«Հայրենի Տուն» ՍՊԸ		Էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգում գնային առաջարկ չի կցել		

1.2 Մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1.3 «Հայրենի Տուն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps համակարգում հրավերով պահանջվող փաստաթղթերը կցված չեն եղել, բացառությամբ հայտի ապահովումից: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն (համակարգում կցված չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկը) գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Հայրենի Տուն» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, գործունեության հասցեները, կապի միջոցները, էլ. հասցեները

(Լ. Մելիքյան)

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցե	Կապի միջոց	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիում	Ք. Երևան, Լենինգրադյան փողոց 23/7 Ք. Աշտարակ Ն. Աշտարակեցու փ. 2 Ք. Երևան, Դավիթ Բեկ 1/25	044 20 10 02	baghdasaryan@inbox.ru
2	«Բաղրամյանշին» ԲԲԸ	Ք. Երևան, Կ. Ուլնեցու 31/2	093 40 20 85	info@bshin.am
3	«ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում	ք. Երևան, Եկմալյան փ., շ. 6/55 գ. Գառնի, Վ. Համբարձումյան փ., տ. 29	055 90 00 50 077 60 80 35	aramarami2020@mail.ru vahag-222@mail.ru

3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Լ. Մելիքյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 05.05.2026թ. պատճառաբանված որոշումը՝ հրավերով սահմանված հավելված N1.2-ի և հավելված N1.3-ի համաձայն մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով ընդհանուր (բոլոր հարկատեսակների հանրագումար) հինգ հարյուր հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին,

2. ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, Երևանի քաղաքապետարան՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 5 տարիների ընթացքում տասը միլիոն ՀՀ դրամի չափով նախկին պայմանագրային պարտավորությունների ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

3.2 Հայտերի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմինների կողմից եզրակացությունները ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Լ. Մելիքյան

Անդամներ՝ ---------- Կ. Բրուտյան

---------- Հ. Պապյան

---------- Էդ. Առուստամյան

---------- Ա. Աչոյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ա. Մանուչարյան

ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/6 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

05.05.2026թ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ հրավերով սահմանված N 1.2 և N 1.3 հավելվածների համաձայն մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով ընդհանուր (բոլոր հարկատեսակների հանրագումար) հինգ հարյուր հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին,

2. ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, Երևանի քաղաքապետարան՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 5 տարիների ընթացքում տասը միլիոն ՀՀ դրամի չափով նախկին պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

Գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատելու է՝ հիմք ընդունելով իրավասու մարմինների կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Լ. Մելիքյան

Անդամներ՝ ---------- Կ. Բրուտյան

---------- Հ. Պապյան

---------- Էդ. Առուստամյան

---------- Ա. Աչոյան